# 5. ՀՀ 2001 թ. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼԸ
# *THE PREPARATORY STAGE OF THE RA 2001 POPULATION CENSUS*
# ПОДГОТОВИТЕЛЬНАЯ СТАДИЯ ПЕРЕПИСИ НАСЕЛЕНИЯ РА 2001г.

ՀՀ 2001թ. մարդահամարի նախապատրաստական աշխատանքներն ընթացան համաձայն ՀՀ 2001թ. մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման աշխատանքների ժամանակացույցի:

*The preparatory works of the RA 2001 Population Census proceeded in accordance with the Program of Activities of RA 2001 Census preparation, conduction and data processing.*

Подготовительные работы переписи населения РА 2001г. проходили согласно календарному плану по проведению, подготовке и обработки материалов переписи населения 2001г.

## 5.1 ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ
## *MAPPING*
## КАРТОГРАФИРОВАНИЕ

Մարդահամարի աշխատանքները կազմակերպելու համար առաջին հերթին անհրաժեշտ էր ՀՀ քաղաքների և խոշոր գյուղերի (5000 և ավելի բնակչությամբ) սխեմատիկ հատակագծերի առկայության ապահովումը: Չնայած «ՀՀ գեոդեզիա և քարտեզագրման կենտրոն» ՓԲԸ-ի կողմից քարտեզագրման աշխատանքները սկսվել էին դեռևս 1997թվականից՝ 1999թ. անցկացվելիք մարդահամարին նախապատրաստվելու համար, սակայն դրանք ֆինանսական միջոցների բացակայությամբ պայմանավորված, չավարտվեցին:

Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեից կատարված հատկացումների հաշվին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Գեոդեզիայի և քարտեզագրման կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իրականացվեցին 89 բնակավայրերի (ներառյալ Երևան քաղաքն իր 12 թաղային համայնքներով) քարտեզագրման աշխատանքները: Սակայն, հարկ է նշել, որ ֆինանսական միջոցների հատկացումները ժամանակի առումով ուշացան, որի պատճառով աշխատանքները սկսվեցին ուշացած և քարտեզներն ու սխեմատիկ հատակագծերը (6-ական օրինակ) մարդահամարի վարչությանը տրամադրվեցին փուլերով:

Դրանց մեկական օրինակներն ուղարկվեցին ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություններ՝ տեղերում տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան

*In order to organize the works of the census, first of all it was necessary to guarantee the availability of schematic plans of towns and large villages (with population number of 5000 and over) of the RA. Though cartographic works had started since 1997 by the "RA Centre of Geodesy and Cartography" CJSCo (closed joint-stock company) in order to get ready for the coming census of 1999, but they were not finished, conditioned by the lack of financial resources.*

*In the framework of the memorandum of mutual understanding, as well as at the expense of RA State Budget allocations, the mapping of 89 settlements (including 12 quarters of Yerevan City) were carried out by the "RA Centre of Geodesy and Cartography" CJSCo of the State Committee of Real Estate attached to the Government of the RA. Nevertheless, it should be noted that the allocations of financial resources were late and that's why the works began delayed and the maps and schematic plans (6 copies of each) were supplied to the Department of Census phased.*

*Copy of each of them was sent to Marz Agencies of the NSS RA to verify it on the spot together with corresponding specialists of local selfgovernment bodies and, in case of need, to make them more exact. The personnel of the Census Department of the NSS RA selectively took part in these works. The verifications made on the maps and schematic plans were transferred to the rest of the copies, as well.*

Для организации работ по переписи населения необходимо было в первую очередь обеспечить наличие схематических планов городов и крупных сел (5000 и более жителей). Несмотря на то, что работы картографирования со стороны ЗАО "Центр геодезии и картографирования" были начаты еще с 1997г., для подготовки переписи населения 1999г. однако из–за отсутствия финансовых средств,они не были завершены.

В рамках меморандума взаимопонимания как и за счет выделений из государственного бюджета РА со стороны ЗАО "Центр геодезии и картографирования" при государственном кадастре, были осуще-ствлены работы по картографирова-нию 89 местажительств (включительно город Ереван со своими 12 муниципальными общинами). Однако, следует отметить, что в плане времени, выделения финансовых средств запоздали, из–за чего работы были начаты с опозданием и карты схематические планы (по 6 экземпляров) были предоставлены управлению переписи населения поэтапно.

По одному экземпляру были отправлены марзовым агенствам для проверки на местах совместно с соответствующими специалистами органов местного самоуправления, и уточнений, в случае надобности. Выборочно, в этих работах участвовали также работники управления переписи населения Национальной статистической службы РА. Уточ-

մասնագետների հետ համատեղ ստուգման, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ ճշգրտման համար: Ընտրանքային կարգով այս աշխատանքներին մասնակցեցին նաև ՀՀ ԱՎԾ մարդահամարի վարչության աշխատակիցները: Քարտեզների և սխեմատիկ հատակագծերի վրա կատարված ճշգրտումները փոխանցվեցին նաև մնացած օրինակների վրա: Զգալի թերությունների դեպքում «Գեոդեզիայի և քարտեզագրման կենտրոն» ՓԲԸ-ն նորից էր կատարում տվյալ աշխատանքը, ընդ որում խիստ կարևորելով քարտեզների և սխեմատիկ հատակագծերի դերը մարդահամարի կազմակերպման գործում՝

ա)Տարածաշրջանների քարտեզները պետք է ներառեն ոչ միայն բոլոր բնակավայրերը, այլև գետերը, բնակավայրերն իրար կապող ճանապարհները, նրանց միջև հեռավորությունները ու սահմանագծերը,

բ) Քաղաքների և խոշոր գյուղերի սխեմատիկ հատակագծերի վրա պետք է ցույց տրված լինեն.

-թաղամասերի և զանգվածների եզրագծերն ու դրանց համարները,

-պողոտաները, փողոցները, հրա-պարակները, նրբանցքները, փակուղիները և դրանց անվանումները,

- յուրաքանչյուր բնակելի շինության համարը և հարկայնությունը,

-հիվանդանոցները, առողջարանները, հյուրանոցները, խանութները և բնակչության կենցաղային սպասարկման այլ կազմակերպությունները,

-կայարանները, վարչական շենքերը և փոստային կապի բաժանմունքները, որոնց մասին պետք է լինի հակիրճ պարզաբանում, նշելով շենքերի համար-ները,

- պետք է ցույց տրված լինեն նաև բնակավայրով անցնող երկաթուղային գծերը,

-քաղաքային բնակավայրերի հաս-տատված հատակագծերի վրա պետք է անցկացված լինեն քաղաքի սահմանագիծը և դրան ենթակա բոլոր բնակավայրերը:

2001թ. մայիսի 5-ի դրությամբ ՀՀ 78 բնակավայրերի և Երևան քաղաքի 12 թաղային համայնքների սխեմատիկ հատակագծերի ընդունումն ավարտված էր: Այս աշխատանքներում իրական դժվարություններ կային

*In case of significant errors "the Centre of Geodesy and Cartography" CJSCo redid that work. Moreover, attaching great importance to the role of the maps and schematic plans in organizing the census the following demmands were made:*

*a) District maps should include not only all the populated areas but also rivers, roads connecting settlements, distances between them and their borders.*

*b) On schematic plans of towns and large villages there should be indicated:*

*- boundaries of blocks and their numbers,*

*- avenues, streets, squares, lanes, dead ends and their names,*

*- the number of every dwelling house and its of storeys ,*

*- hospitals, sanatoriums, hotels, shops and other organizations of public service,*

*- stations, administrative buildings and post-offices about which there should be a brief clarification, marking numbers of buildings,*

*- railways passing through the settlements,*

*- the boundaries of towns and its subsidiary living-places should be marked on certified plans of urban settlements.*

*As of May 5. 2001, the admission of schematic plans of 78 settlements of the RA and 12 quarters of Yerevan was over. There were real difficulties in these works connected with schematic plans of the disaster area; there were available mobile wagons besides officially registered buildings, which were not registered anywhere and could be moved during the census. That's why on schematic plans of living-places in the disaster area there were also compulsorily included all mobile cabins and temporary constructions.*

*In the result of these works town boundaries were verified, moreover names of streets and numbering of blocks and houses were set in order as much as possible and there were no financial resources intended for these works and the were carried out in accordance with resolution N4 of April 18, 2001, adopted by the RA National Committee of organization and realization of the census of 2001, with which corresponding Committees of Marzes*

нения, сделанные на картах и схематических планах, были перенесены на остальные экземпляры. В случае ощутимых недочетов ЗАО "Центр геодезии и картографи-рования" снова выполнял данную работу, причем придавал большое значение роли карт и планов в деле органиации переписи населения:

а. Карты территории должны включать в себя не только все населенные пункты, но и реки, дороги, связывающие населенные пункты, дальность между ними, границы.

б. на картах и схематических планах городов и больших сел должны быть указаны:

- границы кварталов и массивов, их нумирация.

- проспекты, улицы, площади, переулки, тупики и их названия.

- номер и этапность каждого жилого строения.

- больницы, санотории, гостиницы, магазины, точки бытового обслуживания, и другие организации.

- вокзалы, административные здания, отделы почтовой связи, о которых должны быть краткие разъяснения, отмечая номера зданий.

- должны быть указаны также железнодорожные линии, прохо-дящие по данному месту жительства.

- на утвержденных планах городских населенных пунктов должны быть проведены границы города и все подчиняемые ему населенные пункты.

На 5 мая 2001г. был закончен прием схематических планов 78 населенных пунктов и 12 общин г. Еревана РА. В этих работах имелись действительные затруднения, связанные с схематическими планами зоны бедствия: кроме официально зарегистрированных строений, были также передвижные вагоны–домики, которые нигде не были зарегистри-рованны и во время переписи населения могли передвинуться. По этой причине на схематических планах местажительств в зонах бедствия в обязательном порядке были охвачены также все передвижные домики и временные строения.

В результате этих работ были уточнены границы городов, как и по возможности упорядочены названия улиц, нумерация кварталов

աղետի գոտու սխեմատիկ հատակագծերի հետ կապված՝ բացի պաշտոնապես գրանցված շինություններից առկա էին նաև շարժական վագոն-տնակներ, որոնք ոչ մի տեղ գրանցված չէին և մարդահամարի ժամանակ կարող էին տեղաշարժվել: Այդ պատճառով աղետի գոտու բնակավայրերի սխեմատիկ հատակագծերում պարտադիր կերպով ընդգրկվեցին նաև բոլոր շարժական տնակներն ու ժամանակավոր կառույցները:

Այս աշխատանքների արդյունքում ճշգրտվեցին քաղաքների սահմանները, ինչպես նաև հնարավորինս կարգավորվեց փողոցների անվանումների, թաղամասերի և տների համարակալումը, տեղադրվեցին համարանիշեր և անվանացույցեր: Այս աշխատանքների համար ֆինանսական միջոցներ չէր տրամադրված, և դրանք իրականացվել են ՀՀ 2001թ. մարդահամարի կազմակերպման և անցկացման համապետական հանձնաժողովի 18. 04. 2001թ. թիվ 4 որոշման համաձայն, որով առաջարկվել է ր մարզային և տների ցուցակների կազմման աշխատանքներըԵրևանքաղաքի համապատասխան հանձնաժողովներին արագացնել քաղաքների և խոշոր գյուղերի հասցեային տնտեսության կարգավորումն ու փողոցների անվանացույցերի, թաղամասերի և շենքերի համարանիշների (թեկուզ ժամանակավոր բնույթի) տեղադրման աշխատանքները, և պարբերաբար զեկուցել ընթացքի մասին:

Հետագայում քարտեզների մեկ օրինակը կտրատվեց և բաժանվեց ցուցակագրողներին, մյուս օրինակներն էլ բաժանվեցին ըստ հաշվային, հրահանգչական և մարդահամարային տեղամասերի:

*and Yerevan City were recommended to accelerate the regulation of address management and works of fixing street name boards, block and building numberboards (even of temporary nature) of towns and large villages and regularly report about the procedure of the processes.*

*Later one copy of each map was demarced and cut into pieces for the registrars, and the other copies were distributed according to enumeration, supervisory and census areas.*

и домов, были проставлены номера и именные указатели. Для этих работ не были предоставлены средства и потому это было осуществлено согласно решению N4 от 18 апреля 2001г. об организации и проведении переписи населения РА 2001г. Этим решением было предложено облас-тным и соответствующим комиссиям г. Еревана ускорить упорядочение адрессных хозяйств городов и крупных селений и работу устоновления именных указателей, нумерацию кварталов и зданий (хотя бы временные) и периодически отчитываться о ходе работ.

В дальнейшем, один экземпляр карт был разрезан и распределен регистраторам, а остальные экземпляры были распределены по счетным, инструкторским и переписным участкам.

## 5.2 ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒՄ
## *REGISTRATION*
## РЕГИСТРАЦИЯ

Նախապատրաստական աշխատանքների հաջորդ փուլով քաղաքներում և 5000 ու ավել բնակչություն ունեցող գյուղերում իրականացվեց տների (շինությունների) ցուցակագրում` այդ նպատակով օգտագործելով սխեմատիկ հատակագծերի մեկ օրինակը, իսկ գյուղական վայրերում` գյուղական բնակավայրերի ու դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների կազմում, որոնց հիման վրա պետք է իրականացվեր տվյալ տարածքի բաժանումը մարդահամարի անցկացման համար կազմակերպական առումով կառավարելի տեղամասերի` մարդահամարի, հրահանգչական և հաշվային տեղամասերի:

2001թ. մայիսին անցկացվեցին ՀՀ ԱՎԾ մարզային ստորաբաժանումների ղեկավարների և նրանց մարդահամարի գծով տեղակալ-խորհրդատուների հրահանգավորումները «ՀՀ քաղաքներում և խոշոր գյուղերում տների (շինությունների) և գյուղական բնակավայրերի ցուցակների կազմման և ընդունման կարգի մասին» հրահանգի վերաբերյալ:

2001թ. մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման աշխատանքների ժամանակացույցով սահմանված ժամկետներում 2001թ. հունիսի 1-ից 30-ը ՀՀ 89 բնակավայրերում, որոնց համար պատրաստվել էին սխեմատիկ հատակագծեր, անցկացվեցին տների ցուցակների կազմման աշխատանքները, որն իրականացրեցին պայմանագրային հիմունքներով 1 ամիս ժամկետով հավաքագրված և համապատասխան ուսուցում անցած աշխատողները` ցուցակագրողները` թվով 660 մարդ: Այդ թվում. Արագածոտնի մարզում` 31մարդ, Արարատում` 41, Արմավիրում`44, Գեղարքունիքում` 82, Լոռիում`104, Կոտայքում` 41, Շիրակում` 123, Սյունիքում` 25, Վայոց Ձորում` 9, Տավուշում` 31, Երևան քաղաքում 129 մարդ:

*In the next stage of preparatory works the registration of houses (buildings) was carried out in towns and large villages with population number of 5000 and over, using one copy of schematic maps for that purpose, and in rural places the lists of rural settlements and other dwellings in that area were drawn up. On the basis of these lists the demarcation of that area, in the sense of organization to managable unites i. e. Census area, supervisory unit and enumeration area, was carried out for the realization of the Census .*

*In May of 2001 the training of Heads of Marz and its subdivisions of the NSS RA and their deputie-councellors on census was carried out "About the Order of forming and adopting the lists of houses (buildings) in towns and large villages and the list of rural settlements of the RA".*

*According to the terms stated in the Program of Activities on 2001 Census preparation, carrying out and data processing , works of forming the lists of houses in 89 settlements of the RA for which schematic maps were made was carried out from June 1 till 30, 2001. It was implemented by registrars (660 in number) who had been recruited for a period of a month on contract terms and had received corresponding training, of which 31 registrars in Aragadzotn Marz, 41- in Ararat, 44 - in Armavir, 82- in Gegharkunik, 104 - in Lori, 41 - in Kotaik, 123- in Shirak, 25 -in Syunik, 9 - in Vayots Dzor, 31- in Tavush and 129 -in Yerevan City.*

Следующим этапом подготовительных работ, в городах и селах, имеющих 5000 и более жителей, была осуществлена регистрация строений, используя для этой цели один экземпляр схематического плана, а в сельских районах и местожительсвах, находившихся в их составе списков других населенных пунктов, на основании которых должны быть осуществлены деления данной территории, для проведения переписи населения в организации в переписных, инструкторских и счетных участков.

В мае 2001г. был проведен инструктаж руководителей и их заместителей–консультантов по линии переписи населения марзовых подразделений Национальной статистической службы РА, о "порядке принятия, составления списков домов (строений) в городах, крупных селах и сельских населенных пунктах".

Для подготовки, проведения работ по обработке материалов переписи населения 2001г. в установленные сроки, с 1 по 30 июня 2001г. в 89 населенных пунктов, для которых были приготовлены схематические планы, проведены работы по составлению указателей домов, которые были осуществлены набранными на договорной основе сроком на 1 месяц и обученными работниками–регистраторами общим числом 660 человек. В том числе: в марзах Арагацотн-31 человек, Арарат-41, Армавир-44, Гегаркуник-82, Лори- 104, Котайк- 41, Ширак-123, Сюник -25, Вайоц Дзор-9, Тавуш-31 и в городе Ереване-129 человек.ленные сроки, с 1 по 30 июня 2001г. в 89 населенных пунктов, для которых были приготовлены схематические планы, проведены работы по составлению указателей

ՀՀ 871 գյուղական համայնքներում գյուղապետերի աշխատակազմի քարտուղարների միջոցով կազմվեցին գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակները, հիմք ընդունելով գյուղապետարաններում վարվող տնտեսությունների հաշվառման՝ «Համայնքի գրքերի» գրանցումները: Ցուցակագրողների աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով մշակվել էին թաղամասի (զանգվածի) տների ցուցակների ձև1-քաղաքային (աղյուսակ 1,2), իսկ գյուղապետի աշխատակազմի քարտուղարների համար՝ գյուղական բնակավայրերի ու դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների ձև 2-գյուղական փաստաթղթերի լրացման պայմանական օրինակները, որոնց օգնությամբ անցկացվեց նրանց ուսուցումը: Ցուցակների կազմման ժամանակ ցուցակագրողների կողմից մեկ անգամ ևս ճշգրտման ենթարկվեցին բնակավայրերի սխեմատիկ հատակագծերը:

Ցուցակներում ներառված էին նաև ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպություններ՝ հյուրանոցներ, տուրիստական բազաներ, առողջարաններ, հիվանդանոցներ և այլն, ինչպես նաև՝ սոցիալական նշանակություն ունեցող կազմակերպություններ՝ գիշերօթիկ դպրոցներ, մանկատներ, տունինտերնատներ:

Մինչև 2001թ. հունիսի 1-ը քաղաքային համայնքների բնակարանային բաժինների, գյուղապետարանների, պետական հիմնարկների և այն իրավաբանական անձանց կողմից, որոնք իրենց ենթակայության տակ ունեին բնակարանային ֆոնդ, ներկայացվեցին «Բազմաբնակարան շենքի բնակարանների բնութագիրը» թիվ. 1-բնակբնութագիր հաշվետվական ձևերը ՀՀ բոլոր բազմաբնակարան շենքերի համար, անկախ դրանց սեփականության ձևից և պատկանելությունից: Սույն տեղեկատվության հավաքագրման նպատակն էր ՀՀ 2001թ. մարդահամարի հարցաթերթի «Տնային տնտեսության բնակարանային պայմանները» բաժնում բազմաբընակարան շենքերի վերաբերյալ տեղեկությունների ճշգրիտ և ամբողջական լրացման ապահովումը:

*In 871 rural communities of the RA lists of rural settlements and other dwellings in that area were formed through the staff secretaries of community leaders on the basis of registrations in “Community Books” concerning households calculations, which are taken in the rural communities. In order to make the work of registrars more effective, the models of filled documents were designed with the help of which their training was carried out; model 1 - urban (chapters 1, 2) for lists of houses of a district (a housing area) and model 2 – rural for lists of rural settlements and other dwelling in that area for staff secretaries of community leaders. While forming the lists by registrars schematic maps were verified once more.*

*The lists also included Institutions representing a temporary abode, such as hotels, tourist bases, sanatoriums, hospitals and the like, as well as institutions with social significance, such as boarding schools, orphanages and asylums.*

*Up to June 1, 2001, flat-outline forms of report “The outline of flats in the multiunit buildings” were filled and presented for all buildings in the RA , irrespective the type of property and ownership, by housing departments of urban municipalities, village communitie s, state establishments and those juridical persons who had a housing fund at their disposal. The aim of collecting this information was to insure the information about multiunit buldings will be filled in accurately and completely in the portion of “Housing conditions of households” of RA. 2001 census questionnaire.*

домов, которые были осуществлены набранными на договорной основе сроком на 1 месяц и обученными работниками–регистраторами общим числом 660 человек. В том числе: в марзах Арагацотн-31 человек, Арарат-41, Армавир-44, Гегаркуник-82, Лори-104, Котайк- 41, Ширак-123, Сюник -25, Вайоц Дзор-9, Тавуш-31 и в городе Ереване-129 человек.

В 871 сельских общинах посредством секретарей администраций старост были составлены списки сельских населенных пунктов и находящихся на их территории других населенных пунктов, приняв в основу записи в “Книгах общины” регистрации хозяйств ведущихся в сельских муниципалитетах. С целью повышения продуктивности работ регистраторов, были обработаны списки кварталов (массивов) по форме 1 городских (таблицы 1, 2), а для секретарей администраций старост сел, сельских населенных пунктов и находящихся на их территории других населенных пунктов по форме 2-условные примеры заполнения документов, при помощи которых было проведено их обучение. Во время составления списков, регистраторами еще один раз подверглись уточнялись схематические планы местожительств.

В списки были охвачены также организации, которые являлись местом временного проживания: гостиницы, туристические базы, санатории, больницы и д.р. как и организации имеющие социальное значение: школы-интернаты, детские дома, дома-интернаты.

До 1 июня 2001г. со стороны квартирных отделов городских общин,сельских муниципалитетов, государственных учереждений и тех юридических лиц, которые в своем распоряжении имели квартирный фонд, были представлены в “Характеристике квартир многоквартирных зданий” по отчетной формеN1 для всех многоквартирных зданий, независимо от формы собственности и принадлежности. Цель сбора этой информации в разделе “Условия квартирных домовых хазяйств” переписного листа переписи населения РА 2001г- обеспечение заполнение достоверной информации о многоквартирных зданиях .

# 5.3 ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ
# THE DEVELOPMENT OF THE ORGANIZATIONAL PLAN
# СОСТАВЛЕНИЕ ОРГАНИЗАЦИОННОГО ПЛАНА

## 5.3.1 Մարդահամարային շրջանցում
## *Census Circle Chart*
## Переписное районирование

2001թ. հունիս-հուլիս ամիսներին ՀՀ ԱՎԾ-ի մարզային գործակալությունների կողմից տների (շինությունների) և գյուղական բնակավայրերի ցուցակների, համապատասխան քարտեզագրական նյութերի, ինչպես նաև ծանրաբեռնվածության սահմանված նորմաների հիման վրա նախապատրաստվեց և կազմվեց ՀՀ 2001թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման կազմակերպման պլաններն (այսուհետ կազմպլան) ըստ տարածքների (նախկին վարչական) ու մարզերի, որով սահմանվել են.

• տարածքներում մարդահամարի, հրահանգչական և հաշվային տեղամասերի սահմանները (մարդահամարային շրջանացում),

• դրանցում անհրաժեշտ մարդահամարային կադրերի թվաքանակը, նրանց հավաքագրման, ուսուցանելու և պատրաստվածության ստուգումներն անցկացնելու ժամկետները,

• բնակչության շրջանում մարդահամարի հարցերի զանգվածային-լուսաբանման հետ կապված միջոցառումների պլանի մշակումը:

Մարդահամարի կազմպլանի կազմումն իրականացվել է համապատասխան նորմատիվային ակտով սահմանված դրույթներով ՀՀ ԱՎԾ մարզային ստորաբաժանումների ղեկավարների կողմից՝ մարդահամարի հարցերով իրենց տեղակալների անմիջական մասնակցությամբ: Մարդահամարի շրջանացման համար հիմք են հանդիսացել ցուցակագրման տվյալները, քաղաքների և խոշոր գյուղերի սխեմատիկ հատակագծերի և տարածքների քարտեզները, ինչպես նաև մարդահամարային տեղամասերի համար սահմանված նորմատիվները:

Ըստ ՀՀ 2001թ. մարդահամարի ամփոփ կազմակերպման պլանի հանրապետության ողջ տարածքը բաժանվեց 201 մարդահամարի, 1923 հրահանգչական և 11273 հաշվային տեղամասերի:

Փաստացի ձևավորված տեղամասերի քանակը արտացոլված է թիվ 1 սխեմատիկ պատկերում:

*In June and July of 2001, the organizational plans of RA 2001Census preparation and conduction were prepared and drawn up (here forth orgplans) by Marz Agencies of NSS RA according to the districts (formerly administrative) and Marzes based on the lists of houses (buildings) and lists of rural settlements, corresponding area maps and the approved workload norm . It regulated:*

*· the boundaries of the census, supervisory and enumeration areas in districts (census circle chart);*

*· the necessary census staff in them, the terms of their recruitment, training and testing in readiness;*

*· the plan of publicity campaign arrangements .*

*The development of the Census orgplans was carried out in accordance with the regulations stated in corresponding normative act by the heads of NSS RA Marz Agencies and district subdivisions with the immediate participation of their deputy-councellors on Census issues. The census circle chart was based on the registrated lists, the schematic maps of towns and large villages, the district maps and the workload norms stated for the census units.*

*According to the summary orgplan of the RA 2001 Census the whole territory of the republic was divided into 201 census, 1923 supervisory and 11273 enumeration units.*

*The number of de facto formed units is reflected in Schematic picture # 1.*

В июне–июле 2001г., марзовыми агенствами Национальной статистической службы РА, на основании списков домов (строений) и сельських населенных пунктов, в соответствии с материалами кортографии, так же как и норм рабочей нагрузки были составлены планы подготовки, проведения и организации переписи населения РА 2001г. по территориям (бывшим административным) марзов, которыми были установлены:

· переписное районирование территорий переписи населения, границ инструкторских и счетных участков.

· необходимое в них число кадров переписи населения, их набора, обучения и сроки проведения проверок их готовности.

· Обработка плана мероприятий, связанных с массово-просветительными вопросами переписи населения среди жителей.

Составления оргпланов переписи населения были осуществлены соответственным нормативным актом, установленным положением Национальной статистической службы РА, руководителями марзовых подразделений и непосредственным участием их заместителей по вопросам переписи населения. Для обхода переписи населения явились основой данные регистрации, схематические планы и карты территории, а так же нормативы, установленные для переписных участков.

Согласно обобщенной организации плана переписи населения РА 2001г. вся территория Армении была разделена на 201 участок переписи населения, 1923 инструкторских участка и 11273 счетных участка.

Фактически оформленное число участков отображено в схематическом изображении N1.

թիվ 1 սխեմատիկ պատկեր
*Schematic picture N 1*
схематическое изображение

## ՀՀ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՄԱՆ 5 ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (I-V)

*STRUCTURAL SUBDIVISIONS OF RA 2001 CENSUS ORGANIZATION AND CONDUCTION 5 LEVELS (I-V) THROU WHICH CENSUS ININFORMATION WAS SUMMED*

*Структурные подразделения организации и проведения переписи населения РА 2001г. и 5 плоскостей (I-V) подитоживания переписной информации*

Ինչպես երևում է սխեմատիկ պատկերից, հանրապետության ողջ տարածքը բաժանվել է 5 հարթության ըստ ուղղահայաց՝ սուբորդինացիոն ենթակայության սկզբունքի: Յուրաքանչյուր հարթության ստորաբաժանումների համար մշակվել և գործողության մեջ են դրվել դրանց լիազորությունների և պատասխանատվությունների ողջ «ներկա պնակը» նկարագրող նորմատիվային փաստաթղթեր, ինչն ուղղված է եղել ստորին հարթություններում գտնվող ստորաբաժանումների ինքնակարգավորման մակարդակի բարձրացմանը, դրանով իսկ՝ վերին հորիզոնի ստորաբաժանումների օպերատիվ գործընթացների գծով ծանրաբեռնվածության «թեթևացմանը»: Նկարագրվածը կոչված էր նպաստելու վերին հորիզոնի օղակների վերահսկիչ-հրահանգչական լիազորությունների արդյունավետությանը: Լայնամասշտաբ հաշվառումների ժամանակ կառավարման նման սխեման այլընտրանք չունի, այդ իսկ պատճառով ՀՀ ԱՎԾ կողմից մշակված այս համակարգը հավանության էր արժանացել նաև ամերիկյան և այլ օտարերկրյա ու միջազգային փորձագետների կողմից:

*According the schematic picture the whole territory of the republic is devided to 5 levels according to the up-right-subordination principles . For each subdivision of the levels had been developed and functioned normative documents describing the whole "paint colors" of their credentials and responsibilities. That was done to increase the level of self-control of subdivisions situated in the lower levels. The aim of it was the working load relief from operative proceedings of upper horizon subdivisions. The above mentioned regarded to support the effectiveness of the control-supervisory credentials of upper horizon sections. In the course of large – scale censuses , such management scheme has no alternative, that's why the system developed by NSS RA had been also approved by American and other foreign and International experts.*

Как видно из схематического изображения, вся территория республики разделена на 5 плоскостей , согласно принципу вертикального субординацион-ного подчинения. Для подразделений каждой плоскости обработаны и введены в действие нормативные документы, описывающие весь "присутствующий диск" их ответственностей и полномочий, что было направлено на поднятие уровня саморегулирования подразделений, находящихся в нижней плоскости, тем самым на "облегчение" нагрузки по линии оперативных действий подразделений высшего горизонта. Описанное было направлено на результативность контрольно-инструкционных полномочий звеньев высшего горизонта. Во время полномасштабных учетов, подобная схема управления альтернативы не имеет, именно по этому, этот механизм, разработанный НСС РА был одобрен со стороны экспертов американских и других иностранных организаций.

## 5.3.2 *Մարդահամարային կադրերի հավաքագրում*
## *Census Personnel recruitment*
## *Подбор кадров для переписи*

Համաձայն ՀՀ 2001թ. մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման աշխատանքների ժամանակացույցի, նախապատրաստական աշխատանքների հաջորդ փուլով իրականացվեց կազմպլանով հաստատված ժամանակավոր աշխատողների հավաքագրումը:

ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունների և դրանց տարածքային ստորաբաժինների ղեկավարներին առանձնացվեցին մարդահամարի գծով տեղակալների ժամանակավոր հաստիքներ՝ 8 ամսով: Այդ հաստիքով ներգրավվեցին թվով 61 մարդ՝ 11 մարզային, 40 տարածքային և 10 Երևանի թաղային համայնքների ստորաբաժանումներում: Ժամանակավոր աշխատողների հաջորդ հարթությունով նախատեսված էր մարդահամարի տեղամասի վարիչների և նրանց օգնականների հավաքագրումը

*According to RA 2001 Census preparation, conduction and data processing timetable, the next phase was devoted to the recruitment of temporary personnel.*

*Marz agencies of National Statistic Service of RA and the managers of their subdivisions were alloted temporary staffs of Census deputy councellors for 8 month duration .*

*By that staff 61 people were involved in the following subdivisions- 11 marzes, 40 in districts and 10 in the quarters of city Yerevan. By the next level of tempory personnel was supposed the recruitment of census area managers and their assistants for 75 calendar days duration. For that purpose 402 people were recruited. The work for supervisors, the total number of which was 2100 person, was set for 45 calendar days and for the*

Согласно календарному плану работ по подготовке, проведению и обработке материалов переписи населения РА 2001г., следующим этапом, был осуществлен набор, установленных оргпланом, временных работников.

Руководителям марзовых агенств и их территориальных подразделений НСС РА, на 8 месяцев были предоставлены временные штаты заместителей по линии переписи. По этим штатам был вовлечен 61 человек: 11 в марзовых, 40 в территориальных и 10 в подразделениях муниципальных общин Еревана. Следующим этапом для временных работников это набор заведующих участков переписи и их заместителей на 75 календарных дней. С этой целью было набрано 402 человека. Для инструкторов-

75 օրացուցային օրով: Այդ նպատակով հավաքագրվեցին 402 մարդ: Հրահանգիչ-հսկիչների համար աշխատանքը նախատեսված էր 45 օրացուցային օրով, թվով 2100 մարդ, հաշվարարներինը (ներառյալ ռեզերվը)՝ 30 օրացուցային օրով, թվով 11829 մարդ: ՀՀ ԱՎԾ մարզային ստորաբաժանումների կողմից ժամանակավոր աշխատողների ընտրությունն իրականացնելիս հաշվի առնվեց համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առաջարկված թեկնածուները: Նշված կադրերի հավաքագրման ժամանակ առավելությունը տրվեց բարձրագույն կրթություն ունեցողներին՝ դպրոցի ուսուցիչներ, ուսանողներ, տեխնիկումների բարձր կուրսի սովորողներ, ինչպես նաև չաշխատող բնակչության համապատասխան որակավորում ունեցող անձիք: Առավելություն տրվեց նաև նախկին մարդահամարներին, հետազոտություններին և ընտրությունների աշխատանքներին մասնակցած անձանց: Կադրերի ընտրության ժամանակ հաշվի առնվեց այն հանգամանքը, որ նրանք չհանդիսանան ֆիսկալ և կվազիֆիսկալ գործառույթներ իրականացնողներ, որի նպատակը հաշվարարների հետ հանդիպելուց բնակիչների չխուսափելը և մարդահամարի հարցաթերթերին բնակչության պատասխանների անկաշկանդ լինելն է: Այն ժամանակավոր աշխատողներն, ովքեր հոգեբանական խնդիրներ ունեին մարդկանց հետ շփվելու հարցում, փոխարինվեցին նորերով:

ՀՀ 2001 թ. մարդահամարի աշխատանքներին ժամանակավորապես ընդգրկված աշխատողների տարիքային, կրթական և ըստ զբաղմունքի բաշխումը բերվում է ստորև.

*enumerators (the reserve inclusive), the total number of which was 11 829 pers., was set for 30 calendar days. While selection of temporary employees by NSS RA Marz subdivisions the candidates introduced by the self-government bodies were taken into account. While recruiting the above-mentioned personnel the privilege was given to those having higher education - teachers, students, technical school graduate students, as well as unemployed people having the appropriate qualification. A privilege was also given to the individuals taken part in the works of previous censuses, surveys and elections.*

*During the selection of the personnel the fact of their not being fiscal or quasi-fiscal functionaries was taken into account, the purpose of which was averting the avoidance of inhabitants to meet with the enumerators and to have direct answers of population to the questions of the census questionnaire. Temporary employees who had psychological problems in communicating with people were replaced by new ones.*

*The distribution of workers temporary employed for works of the census of 2001, RA, according to age, education and occupation is given below:*

контролеров работа была расчитана на 45 календарных дня, количеством 2100 человек, счетчиков (включая резерв) 30 календарных дней, количеством 11829 человек. При выборе временных работников со стороны подразделений НСС РА были учтены кандидаты, предложенные со стороны органов местного самоуправления. Во время набора указанных кадров привелегия была отданна лицам имеющим высшее образование: учителям, студентам, учащимся старших курсов техникумов, а также имеющим соответственную квалификацию неработающим лицам. Привелегия была дана также лицам участвовавшим в предыдущих переписях, исследованиях и выборах. Во время выбора кадров было учтено то обстоятельство, что они не явились осуществляющими фискальные и квазифискальные функции, для чего при общении счетчика с жителями, последние были непосредственны при заполнении переписного листа. Те временные работники, которые имели психологические трудности в общении с людьми были заменены новыми.

Расспределение временных работников переписи населения РА 2001г. по возрасту, занятию и образованию приводится ниже:

## 5.3.3 *Մարդահամարային կադրերի հրահանգավորում*
### Training *of Census Personnel*
### Инструктаж кадров переписи населения

Մարդահամարի կադրերի հավաքագրումից հետո սկսվեցին նրանց հրահանգավորման (ուսուցման) աշխատանքները: 2001թ. հուլիս ամսվա ընթացքում 10 աշխատանքային խմբերով անցկացվեցին ՀՀ ԱՎԾ մարզային ստորաբաժանումների ղեկավարների և նրանց մարդահամարի գծով տեղակալ-խորհրդատուների (թվով 122 մարդ) հրահանգավորումները` ՀՀ 2001թ. մարդահամարի կազմակերպչական և մեթոդաբանական հիմնական դրույթների և ՀՀ 2001թ. մարդահամարն անցկացնելու կազմակերպման պլանները կազմելու կարգին առնչվող հարցերով:

2001թ սեպտեմբեր ամսվա ընթացքում, 20 խմբերով անցկացվեցին ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային ստորաբաժանումների ղեկավարների և մարդահամարի գծով նրանց տեղակալ-խորհրդատուների, այնուհետև մարդահամարի տեղամասի վարիչների և նրանց օգնականների հրահանգավորումները` ՀՀ 2001թ. մարդահամարի հարցաթերթը լրացնելու (մարդահամարն անցկացնելու) կարգի, մարդահամարի տեղամասի վարիչի ու նրա օգնականի, հրահանգիչ-հսկիչի և հաշվարարի պարտականությունների, ինչպես նաև այլ օժանդակ փաստաթղթերի լրացմանն առնչվող հարցերի վերաբերյալ:

Մարդահամարի տեղամասերի վարիչների և նրանց օգնականների հրահանգավորումներն (ուսուցումը) անցկացվեցին ՀՀ ԱՎԾ մարդահամարի վարչության կողմից, հրահանգիչ-հսկիչներինը` ՀՀ ԱՎԾ մարզային ստորաբաժանման ղեկավարների և մարդահամարի գծով նրանց տեղակալների, իսկ հաշվարարներինը` մարդահամարի տեղամասերի վարիչների և նրանց օգնականների կողմից (համապատասխան տեղամասերի հրահանգիչ-հսկիչների մասնակցությամբ):

Ուսուցման գործընթացներն ուղեկցվեցին մարդահամարի հարցաթերթի և մարդահամարային այլ փաստաթղթերի գործնական լրացումներով:

*After the recruitment of census personnel the works of their trainings started. In July of 2001 the heads of NSS RA Marz Agencies and their district subdivisions, their deputy-conuncellors for census (122 in number) were given training relating to the Main organizational and methodological regulations and the Order of RA 2001 Census organizational plans preparation , in 10 working groups.*

*In September of 2001 the training related to the order of filling in the census questionnaire of 2001 RA(census conduction), as well as about the responsibilities of census personnel (study of the necessary documents) was given to the heads of NSS RA Marz Agencies and their district subdivisions, their deputy-conuncellors for census, the managers of census areas and their assistants, in 20 groups.*

*The training of the Census Area managers and their assistants was carried out by the Census Department of NSS RA, the supervisors - by the heads of the district subdivisions of NSS RA Marz Agencies and their deputiy-councellors for census, enumerators– by the Managers of the census areas and their assistants (with participation of the supervisor of the corresponding area).*

*The training processes were accompanied by a practical filling of the census questionnaire and other census documents.*

После набора кадров переписи населения началась работа по их обучению . В течении июля 2001г. 10 раб. группами были проведены инструкции руководителей подразделений и их заместителей-консультантов по переписи нселения (122 человека) об основных организационных и методологических положениях переписи РА 2001г. и по вопросам порядка составления организационных планов проведения переписи.

В течении сентября 2001г. 20 группами был проведен инструктаж областных руководителей подраздилений Национальной статистической службы РА и их заместителей-консультантов по линии переписи населения, затем заведующих участками и их помощников, об обязанностях инструктора- контролера и счетчика переписи, а так же о касающихся заполнению других вспомогательных документов.

Инструктаж (обучение) заведующих переписными участками населения и их помощников был проведен со стороны управления переписи населения Национальной статистической службы РА, инструкторов-контролеров- руководителями и их заместителями по линии переписи населения марзовых подразделений Национальной статистической службы РА, а счетчики переписи населения – заведующими участков переписи населения и их помощниками при участии соответствующих инструкторов-контролеров участков.

Учебные процессы сопровождались практическим заполнением переписных листов и других переписных документов.

## 5.3.4 *Զանգվածային-բացատրական միջոցառումներ*
## Publicity measures
## Массово-разъяснительные мероприятия.

Մարդահամարի անցկացումը պահանջում է բնակչության շրջանում լայն բացատրական աշխատանք՝ մարդահամարի նպատակների, խնդիրների, անցկացման կարգի, ժամկետների մասին: Այն նպատակային դարձնելու համար կազմվեց մարդահամարի զանգվածային-բացատրական աշխատանքների ծրագիր: Մարդահամարի նախապատրաստման և անցկացման մասին բնակչությանը պարբերաբար տեղեկացվում էր ինչպես մամուլով, այնպես էլ ռադիո ու հեռուստահաղորդումներով: Բնակչությանը տեղեկացվեց նաև,որ մարդահամարի անցկացման գործընթացները կանոնակարգվում են «Մարդահամարի մասին» օրենքով, որով սահմանված են նաև բնակչության անհատական տեղեկատվության գաղտնիության պահպանումը:

Մարդահամարի նախօրեին հանրային հեռուստատեսությամբ ՀՀ վարչապետը կոչով դիմեց բնակչությանը, հայցելով յուրաքանչյուրի աջակցությունն ու մասնակցությունը մարդահամարի անցկացման գործընթացին, պարզաբանեց մարդահամարների դերն ու նշանակությունը երկրի առջև ծառացած խնդիրների հստակեցման գործում:

Մարդահամարին բնակչության ակտիվ մասնակցությունն ապահովելու նպատակով կազմակերպվեցին նաև առանձին հեռուստա և ռադիոհաղորդումներ, այդ թվում, միջազգային և արտերկրի փորձագետների մասնակցությամբ:

Ստեղծվել են մարդահա-մարին նվիրված 4 գովազդային տեսահոլովակներ և ցուցադրվել հետևյալ հեռուստալիքներով՝ Հ1, Ա1+, Պրոմեթևս:

Մարդահամարի զանգվա-ծային-բացատրական աշխատանքների ծրագրին իր մասնակցությունն է ցուցաբերել նաև «Տնտեսական բարեփոխումներիվերլուծական տեղեկատվական կենտրոն»-ը, որի կողմից կազմակերպված ռադիոհաղորդումները սկսվեցին դեռևս 2000թ. նոյեմբերից:

*The realizations of census demands publiucity campaign among the population to increase the public understanding of purposes, problems, order of proceeding and dates of the census. A plan of publicity capaign was drawn up to make it more purposeful. The population was regularly informed about the preparation and realization of the census both by press and on the radio and on TV. The population was also informed that the proceedings of the census were regulated by the Act "On Census" which also stated the confidentiality of personal information of the population.*

*On the eve the census the RA Prime-minister appealed to the population on public TV for everyone's assistance and participation in the proceedings of the census and clarified the role and significance of census in solving the problems created in our country. In order to guarantee the population's active participation in the census special TV and radio broadcasts were organized, including the participation of International and foreign experts.*

*Four publicity clips about the census were produced and shown on the following TV channels: H1 (public TV), A1+, Prometheus.*

*The Informational-analyzing centre of economic develompments' also participated in the publicity programs of the census and had organized radio-broadcasts since November of 2000.*

*In the frammework of UNFPA program "Assistance to the Census" Arm/97/PO2, based on the schedule, the census documents and publiicity materials were printed by the publishing houses "Lusabats" and "Tigran Mets".*

*The publishing house "Lusabats" decorated and printed 12 000 colored posters headed "Census 2001" and booklets and the "Tigran Mets" – 9677 wall calendars headed "Census 2001".*

*In the RA Marzez TV and radio broadcasts about the realization of the*

Проведение переписи населения требует широкой разъяснительной работы среди жителей о цели переписи населения, задачах, порядке проведения и сроках. Для достижения цели был создан план массово- разъяснительных работ. О подготовке и проведении переписи населения жители периодически информировались как из печати, так и по радио и телепередач. Население было так же информированно, о том, что процессы проведения переписи регламентируются законом "О переписи населения", который устанавливает так же сохранение тайны индиви-дуальной информации населения (жителей).

Накануне переписи населения по общественному телевидению РА премьер – министр обратился своим призывом к населению с просьбой оказать содействие и участие в процессе проведения переписи населения, разъяснил роль и значение дела в решении, вставших перед нашей страной, задач.

С целью обеспечения активного участия жителей в переписи населения, были организованы так же теле и радиопередачи, в том числе при участии международных экспертов из зарубежных стран.

Были созданы и показанны по телеканалам Հ1, А1+ и Прометевс 4 рекламных клипа, посвященных переписи населения.

Программе масово- разъяснительных работ оказали свое содей-ствие так же "Информационный цен-тр экономических, аналитических преобразований", организованные которыми радиопередачи были начаты еще с ноября 2000г.

В рамках программы Фонда населения ООН АРМ/97/Р02 "Содействие переписи населения" по предусмотренному графику издательствами "Лусабац" и "Тигран Мец" были напечатаны документы и массовые материалы, освещающие перепись населения.

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ARM/97/PO2 "Օժանդակություն մարդահամարին" ծրագրի շրջանակներում, նախատեսված գրաֆիկով, «Լուսաբաց» և«Տիգրան Մեծ» հրատարակչական տների կողմից տպագրվեցին մարդահամարային փաստաթղթեր և մարդահամարը լուսաբանող զանգվածային նյութեր:

«Լուսաբաց» հրատարակ-չատան կողմից ձևավորվեցին և տպագրվեցին 120000 հատ «Մարդահամար 2001» գունավոր պլակատներ, բուկլետներ, իսկ «Տիգրան Մեծ» հրատարակչատան կողմից` «Մարդահամար 2001» 9677 հատ պատի օրացույց:

ՀՀ մարզերում տեղական հեռուստաալիքներով և ռադիոյով կազմակերպվեցին մարդահամարի անցկացմանը նվիրված հաղորդումներ, որոնցում կարևորվեցին ոչ միայն համապետական միջոցառման նպատակներն ու խնդիրները, այլև անցկացման կարգը, հարցաթերթերի լրացման կանոնները, այլ հատկանշական մանրամասնություններ:

Վերը նշված զանգվածային-բացատրական միջոցառումների արդյունքում ապահովվեց բնակչության ակտիվ ու բարյացակամ մասնակցությունը մարդահամարին:

Մարդահամարի աշխատանքների ընթացքում վարչության աշխատողների համար Գրողների Ծաղկաձորի ստեղծագործական տանը պարբերաբար սեմինար պարապմունքներ էին անցկացվում, որտեղ ի մի էին բերվում կատարված աշխատանքները և քննարկվում հետագա անելիքները նվիրված մարդահամարի նախապատրաստման ու անցկացման տարբեր փուլերում իրականացվող գործընթացներին:

*census were organized on local channels where the importance was attached not only to the aims and problems of Census as National event, but also to the order of its proceedings, the rules of filling in questionnaire and other specific details.*

*In the result of the arrangements of publiicity campaign mentioned above, the population active and benevolent participation in the census was guaranteed.*

*During the works of the census there were regularly organized seminars for the Census Department personnel in the "Creative House of the Writers" in Tsakhkadzor during which the fulfilled tasks were brought together and further ones over the proceedings of different stages of preparation and realization of the census were discussed.*

Издательсвом "Лусабац" были оформлены и напечатаны 120000 штук цветных плакатов "Перепись населения 2001" и буклетов, а издательством "Тигран Мец" 9677 настенных календарей "Перепись населения 2001".

В марзах РА по радио и местным телеканалам были организованы передачи, посвященные проведению переписи населения, в которых придалось значение не только цели и задаче общегосударственного мероприятия, но и подробности порядка проведения, заполнения переписных листов.

В результате вышеуказанных массого-разъяснительных мероприятий было обеспечено активное и доброжелательное участие жителей в переписи населения.

В течении работ переписи населения для работников управления в доме творчества писателей в Цахкадзоре периодически проводились семинарные занятия, в которых подытоживались работы и обсуждались дальнейшие планы касающиеся подготовки и проведению разных этапов переписи населения в процессе ее осуществления.